ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.03.2018թ. թիվ 1807786478 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<17 >>04 2018թ. 174-44078-18/174-5647 ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արա Սարգսյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Հալաբյան փողոցի 25 շենքի 66 բնակարանի բնակիչ Արա Սարգսյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.03.2018թ. թիվ 1807786478 որոշումը՝ նշելով, որ կանգառը կատարվել է ավտոմոբիլի անսարքության պատճառով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության թիվ 955-Ն որոշման 83-րդ կետի համաձայն՝ կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը առաջին հերթին պետք է կատարի նույն որոշման 22-րդ **(վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում)** և 23-րդ **(կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի <<վթարային կանգառ>> ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերից)** կետերի պահանջները, որից հետո միջոցներ ձեռնարկի տրանսպորտային միջոցը այդ վայրից դուրս բերելու համար:

Դիմումատուի կողմից չի կատարվել վերը նշված որոշման 23-րդ կետի պահանջն, ինչը կփաստեր, որ կանգառը հարկադրված է եղել և առիթ կհանդիսանար վիճարկվող որոշումը վերանայելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.03.2018թ. թիվ 1807786478 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արա Սարգսյանին և ՃՈ ՏՎՀԽԱ կենտրոն:

Կատարող Դ.Բալաբանյան

Ե.Կարապետյան